600.0060.23.03.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մարտի 2016 թվականի №60Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի №10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի հուլիսի 2-ի №1/18.2/11404-15, օգոստոսի 17-ի №1/18.2/11791-15, դեկտեմբերի 17-ի №1/18.2/12669-15 և «Մուշեղ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2015 թվականի նոյեմբերի 5-ի №5 ու 2016 թվականի փետրվարի 26-ի №6 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 25-ի «Փոքր ՀԷԿ-երին գործունեության լիցենզիաներ տրամադրելու մասին» №10 որոշմամբ «Մուշեղ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0018 լիցենզիայի պայմանների՝

1) 6-րդ կետում «442» թիվը փոխարինել «588,6» թվով,

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) Արփա գետի Անանուն գետից ջրառի նիշն է 2165մ.,

2) Սառնաղբյուրի աղբյուրներից սնուցվող Ջերմուկի քաղաքային զբոսայգու լճակներից ջրառի նիշն է 2110մ.,

3) Ջրահեռացման նիշն է՝ 2030մ.,

4) Հաշվարկային ելքը Արփա գետի Անանուն գետից 0,3 խմ/վ.,

5) Հաշվարկային ելքը Սառնաղբյուրի աղբյուրներից սնուցվող Ջերմուկի քաղաքային զբոսայգու լճակներից 0,5 խմ/վ. (հունիս-սեպտեմբեր ամիսներին ջրառ չի իրականացվում),

6) Հաշվարկային ճնշումը Արփա գետի Անանուն գետից 130մ.,

7) Հաշվարկային ճնշումը Սառնաղբյուրի աղբյուրներից սնուցվող Ջերմուկի քաղաքային զբոսայգու լճակներից 72մ.,

8) Փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն 588,6 կՎտ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
23 մարտի 2016թ.
ժամը 16[00]